ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1»

ք. Վեդի «31» հունվարի 2020 թ.

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էվրի Դեյ» ՓԲԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մանասերյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

Հոդված 1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է Պատվիրատուին առաքել 18.9 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող "Մաքուր Ջուր" աղբյուրի ջուր, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել մատուցված ապրանքի դիմաց՝ բանկային փոխանցման միջոցով:

1.2. Ապրանքը խցանափակվում է մեկանգամյա օգտագործման խցաններով:

Հոդված 2. Արժեքը և վճարման կարգը

2.1. Պատվիրատուին 18.9 լիտրանոց շշով "Մաքուր Ջուր" աղբյուրի ջուրը կտրամադրվի՝ **մեկ շիշը 1710 (մեկ հազար յոթ հարյուր տաս)** ՀՀ դրամով՝ ներառյալ 20 % ԱԱՀ:

2.1.1. Յուրաքանչյուր պատվերի նվազագույն քանակ է սահմանվում 2 (երկու) շիշ ջուրը:

2.2. Եթե Պատվիրատուն պատվիրում է 1 (մեկ) շիշ ջուր, մատակարարը իրավունք ունի պահանջելու վճարել հավելյալ 250-ական (երկու հարյուր հիսունական) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր նման Պատվերի համար: :

2.2.1. Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի հիման վրա առաքման ընթացքում գտնվող պատվերի հետաձգման դեպքում մատակարարը կարող է պահանջել վճարել հավելյալ մինչև 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ 20% ԱԱՀ) հետաձգման հավելավճար՝ յուրաքանչյուր նման Պատվերի համար:

2.3 Շիշը (18,9լ տարողությամբ շրջանառելի տարան) հանդիսանում է մատակարարի սեփականությունը: Ջրի առաքման ընթացքում այն Պատվիրատուին է տրամադրվում անվճար շահագործման պայմանով և ենթակա չէ վաճառքի:

2.4. 2.1 և 2.2 կետերում նշված գինն իր մեջ ներառում է ապրանքի առաքման տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև մատակարարի այլ ծախսեր՝ սույն պայմանագրի կատարման հետ կապված:

2.5. Ջրի առաքման օրվանից սկսած, 30 օրվա ընթացքում, Շիշն անվճար շահագործման նպատակով տրամադրվում է Պատվիրատուին և ենթակա է վերադարձման ոչ ուշ, քան առաքման օրվան հաջորդող 31-րդ օրը:

2.5.1. Եթե մինչև Պայմանագրի 2.5 կետում նշված ժամկետի ավարտը Պատվիրատուն պատվեր է անում, ապա նախորդ պատվերի (պատվերների) ժամանակ առաքված շիշը (շշերը) մատակարարը ետ է ընդունում Պատվիրատուից նախորդ առաքման վայրում, այլապես Պատվիրատուն պարտավորվում է իրեն անհատույց օգտագործման հանձնված շիշը (շշերը), Պայմանագրի 2.5 կետում սահմանված ժամկետներում, իր միջոցներով և հաշվին վերադարձնել մատակարարին՝ վերջինիս փաստացի գործունեության վայրում (հասցեում):

2.6 Համաձայն գործող պայմանագրի, ապրանքի գնի ցանկացած փոփոխություն կազմվում է գրավոր և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.7 Պատվիրատուն վճարումը կարող է կատարել փոխանցումով՝ հաշիվ-ապրանքագրում նշված ամսաթվից հաշված 15 բանկային օրվա ընթացքում, ընդ որում հաշիվ-ապրանքագրի հաստատմամբ հավաստվում է ապրանքի մատակարարումը:

2.8 Եթե Պատվիրատուն մատակարարից գնած ջուրը սպառում է էլեկտրական դիսպենսեր (ջրալից-բաշխիչ) սարքի միջոցով, ապա իրավունք ունի օգտվելու մատակարարի կողմից կողմից տրամադրվող՝ դիսպենսերների սանիտարական մաքրման ծառայությունից, որի տարեկան պլանային արժեքն է 6,000 (վեց հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և ներառում է առավելագույնը 2 (երկու) սանիտարական մաքրում 12 (տասներկու) ամսվա ընթացքում՝ հաշվարկված առաջին մաքրման օրվանից՝ 6 (վեց ամիս ընդմիջումով):

Խորհուրդ է տրվում կազմակերպել դիսպենսերի սանիտարական մաքրում տարեկան առնվազն երկու անգամ: Նման ծառայությունից չօգտվելու դեպքում Մատակարարը չի երաշխավորում սպառվող ջրի որակը՝ կախված դիսպենսերի սանիտարահիգիենիկ վիճակից:

Պատվիրատուի ցանկության դեպքում Մատակարարը հեռախոսակապի միջոցով կներկայացնի ինքնուրույն սանիտարական մաքրում իրականացնելու կարգը՝ որպես կոմպենսատոր մաքրում

3. Կողմերի պարտավորությունները և առաքման պայմանները

3.1. Մատակարարը պարտավորվում է՝

3.1.1 Ապրանքը մատուցել պատշաճ որակով:

3.1.2 Ապրանքի առաքումն իրականացնել Պատվիրատուի կողմից նշված հասցեով:

3.1.3 Իրականացնել Ապրանքի առաքումը տվյալ տարածքի համար ընկերության կողմից սահմանվող գրաֆիկով:

3.2 Պատվիրատուն պարտավորվում է՝

3.2.1 Դատարկ տարան/տարաները (շիշը) վերադարձնել Մատակարարին հաջորդ առաքման ժամանակ, բայց ոչ ուշ քան, ապրանքի առաքման օրվան հաջորդող 31-րդ օրը:

3.2.2 Չվնասել շիշը, չօգտագործել այն այլ նպատակներով, չլցնել այն այլ հեղուկներով (ներառյալ ծորակի ջրով) և նյութերով:

3.2.3 Մատակարարին տեղյակ պահել ընկերության վերակազմակերպման կամ լուծարման մասին դիմում ներկայացնելուց 5 /հինգ օր/ առաջ, ինչպես նաև՝ իր դեմ սնանկության կամ վերակազմակերպման կամ լուծարման վարույթ հարցվելուց 10 /տաս/ օրվա ընթացքում:

3.2.4 Վճարել սույն պայմանագրի հոդված 2-ում նշված ապրանքների մատակարարման արժեքը պայմանագրով և հաշիվ-ապրանքագրով նախատեսված ժամանակահատվածում:

3.3 Առաքման պայմանները.

3.3.1 Մատակարարը ապրանքի առաքումն իրականացնում է սեփական տրանսպորտային միջոցներով

3.3.2 Բեռնաթափումն ու բեռնափոխադրումն իրականացվում է Մատակարարի կողմից:

3.3.3 Պատվիրատուին ապրանքն առաքվում է հաշիվ-ապրանքագրով, որում նշված օրը համարվում է Ապրանքի առաքման օր:

3.3.4 Այն դեպքում, երբ վերադարձվող տարաների (18,9լ) քանակը համապատասխանում է վերադարձի օրը Պատվիրատուին առաքված տարաների քանակին, ապա առաքվող ջրի հաշիվ-ապրանքագիրը կհանդիսանա նաև վերադարձվող տարաների երկկողմանի հանձնման-ընդունման ակտ:

3.3.5 Այն դեպքում, երբ վերադարձվող տարաների (18,9լ) քանակը չի համապատասխանում վերադարձի օրը Պատվիրատուին առաքված տարաների քանակին, ինչպես նաև ցանկացած այլ դեպքում, տարաների վերադարձը հավաստվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտով (ձևը սահմանում է Մատակարարը):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Շիշը վնասելու կամ չվերադարձնելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է յուրաքանչյուր շշի դիմաց մատակարարին փոխհատուցել 6,000 (վեց հազար) ՀՀ դրամի չափով:

4.2 Շիշը համարվում է վնասված (ոչ ենթակա օգտագործման), երբ շշի մակերեսին (ներառյալ պիտակին) օգտագործողի կողմից հասցված ֆիզիկական վնասի և ապրանքային տեսքի խաթարման պատճառով բացառվում է դրա հետագա շահագործումը (օրինակ շիշը ծակել, դեֆորմացնել, խորը քերծել, շշի վրա քիմիական նյութեր, սոսինձ, ներկեր քսել և այլն):

4.3 Շիշը համարվում է չվերադարձված, եթե խախտվել են Պայմանագրի 2.5 և 3.2.1 կետերի պահանջը:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Վնասված կողմը պետք է շտապ զգուշացնի "Անհաղթահարելի ուժի" իրադարձության և արդյունքների մասին և պետք է կիրառի բոլոր խելամիտ ջանքերը՝ նվազեցնելու այնտեղից բխող անբարենպաստ հետևանքները:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Պայմանագրի կատարման հետ ծագող վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով:

6.2. Բանակցությունների միջոցով 10 օրվա ընթացքում արդյունքի չհասնելու դեպքերում վեճերը կպարզաբանվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի փոփոխում և լուծում

7.1 Պայմանագրի դրույթների ցանկացած փոփոխություն պետք է կատարվի գրավոր և հաստատվի կողմերից յուրաքանչյուրի գրավոր համաձայնությամբ:

7.2 Պայմանագրի փոփոխությունները և ավելացումները ուժի մեջ են մտնում դրանց ստորագրման պահից սկսած և հանդիսանում են սույն պայմանագրի հավելված:

7.3 Մատակարարը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը Պատվիրատուի կողմից 3.2 կետի պահանջների խախտման, վճարումները 60 օրից ավելի ուշացնելու և 31 օրից ավելի ապրանք չպատվիրելու դեպքում:

7.4 Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը մատակարարի կողմից 3.1 կետի պահանջների խախտման դեպքում:

7.5 Կողմերից յուրաքանչյուրը, մյուս Կողմի մեղքի բացակայության դեպքում, կարող է 15 (տասնհինգ օր) առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ կատարելով մինչ Պայմանագրի լուծումն առաջացած պարտավորությունները:

8. Այլ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ, բաշառությամբ Կողմերի համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ, սույն Պայմանագրով սահմանված կարգով, Պայմանագիրը լուծելու դեպքերի:

8.2. Պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել միայն Կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն Պայմանագրով, լրացուցիչ համաձայնագրի միջոցով:

8.3 Պայմանագիրը կազմված է երկու հայերեն օրինակից, որոնք ունեն հավասարազոր ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	Մատակարար
«Վեղու ծննդատուն» ՓԲԸ	**«Էվրի Դեյ» ՓԲԸ**
ք.Վեղի, Գայի 1	ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
220123330981000	Հ/Հ 21700111152500
ՀՎՀՀ՝ 04104551	ՀՎՀՀ 09104669
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան	Տնօրեն Ա. Մանասերյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
« 31 » հունվարի 2020 թ. կնքված
N ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայություն										մատուցման ժամկետը
Հ/Հ	CVP կոդ	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Հասցեն	
1	41111100	Շշալցված աղբյուրի ջուր	Հայաստան	18.9 լիտրանոց 22ով «Մաքուր ջուր»	հատ	1710	136800	80	ք.Վեդի, Գայի 1	Պայմանագիրը կնքելուց մինչև 25.12.2020թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
ԱՇԻԲ Վեդի մ/ճ
Հ/Հ՝ 247763031777
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

Ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էվրի Դեյ» ՓԲԸ
ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 21700111152500
ՀՎՀՀ 09104669
Տնօրեն՝ Ա. Մանասերյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«31» հունվարի 2020 թ. կնքված
N ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Շշալցված աղբյուրի ջուր	0	0	8550	17100	34200	51300	68400	85500	102600	119700	128250	136800	136800

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վեղու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեղի, Գայի 1
ԱՇԻԲ Վեղի մ/ճ
Հ/Հ՝ 247763031777
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրէն՝ Վ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էվրի Դեյ» ՓԲԸ
ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 21700111152500
ՀՎՀՀ 09104669
Տնօրէն՝ Ա. Մանասերյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » _____2020 թ. կնքված
N ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Էվրի Դեյ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5
Հ/Հ 1570020154910100
ՀՎՀՀ 09104669

Պատվիրատու
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
Հ/Հ՝ 220123330981000
ՀՎՀՀ՝ 04104551

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ N « ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների							
	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1

« » _____ 2020 թ. կնքված

N ՎԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն